

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԱՐԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ *տ.գ. դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն*

ՍՎԵՏԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԶԱՐՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

Հայաստանի տնտեսության վրա հարկային և մաքսային մարմինների գործունեության ու մակրոտնտեսական իրավիճակի գնահատումները կարևորվում են մի քանի պատճառներով: Նախ՝ տնտեսական աճ ապահովող արդյունավետ տնտեսության առկայությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եկամուտների ավելացումն ինքնին շատ կարևոր նպատակ է Հայաստանի Հանրապետության կառավարության համար¹: Նշված նպատակները նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կարևորագույն բաղադրիչներն են²: Ընդունված կանոն է, որ տնտեսական անկումների ժամանակ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի ընդլայնող՝ պակասուրդի մեծացման հաշվին ավելի շատ ծախսերի իրականացում, քան եկամուտների հավաքագրում և հակառակ վարքագիծը՝ տնտեսական վերելքների ժամանակահատվածում³:

Ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի ՀՀ կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Այսինքն, ըստ որի, տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին էլ ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ ՀՀ կառավարության համար: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և ՀՀ կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական ցուցանիշները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Հարկային և մաքսային մարմինների գործունեության արդյունքում հավաքագրված ու դրանցով պայմանավորված մուտքագրումների ազդեցության կապը երկրի մակրոտնտեսական ակտիվության վրա հասկանալու համար ստորև ներկայացվում են մակրոտնտեսական մի քանի ցուցանիշներ: Այսպես, 2015 թվականին հարկային և մաքսային մարմինների կողմից ապահովվել են 1067.9 մլրդ դրամի չափով հարկեր և տուրքեր, որը 3.8 մլրդ դրամով կամ 0.4%-ով ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից: 2015 թվականին ստեղծված համախառն ավելացված արժեքի անվանական աճը, մասնավորապես, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության, շինարարության, հանքագործական արդյունաբերության ոլորտներում կազմել է համապատասխանաբար 12.4%, 6.2% և 2.4%, իսկ, օրինակ, առևտրի և մշակող արդյունաբերության ոլորտներում, որոնք հարկատեսակների համար հանդիսանում են հարկունակ բազա, ստեղծված համախառն ավելացված արժեքը նվազել է համապատասխանաբար 3.5% և 0.3%-ով: Այս պայմաններում, ըստ «Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների»


¹ ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060 - Ա որոշում, էջ 7-8:

² Նույն տեղում, էջ 10-11:

³ ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, ՄԱՍ II-Ա, 2011թ.:

2015 թվականին ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 103 տոկոս (նախորդ տարվա համեմատ նվազել է 0.6 տոկոսային կետով), իսկ հարկերի հավելաճի տեմպը կազմել է 0.4 տոկոս (զճապատկեր 1):

Ցանկացած երկրում, այդ թվում ՀՀ-ում վարվող հարկային քաղաքականության և ձևավորված հարկային համակարգի գնահատման հիմնական բնութագրիչը հարկային մուտքերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշն է, որը հանրապետությունում դեռևս բավականին ցածր է:



Գճապատկեր 1. Հարկերի և անվանական ՀՆԱ-ի հավելաճի տեմպերը, հարկեր/ՀՆԱ ցուցանիշն ըստ 2013-2015թթ.¹


Սակայն 2015թ թվականի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 21.2 տոկոս նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազելով 0.8 տոկոսային կետով (22.0 տոկոսի համեմատ): 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր ապահովել 1138.7 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրք: 2015 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքի կատարողականը կազմել է 93.8 տոկոս (զճապատկեր 2):

Այս հանգամանքն, անշուշտ, պահանջում է հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված համալիր քայլեր: Ընդ որում, դրանք պետք է լինեն փոխկապակցված և կրեն համակարգային բնույթ, քանի որ նույնիսկ արդյունավետ դրույքաչափերի կիրառման պարագայում հիմնականում հավասարակշռված ու հիմնավորված վարչարարությամբ կարելի է հասնել հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետության: Գործարար միջավայրի բարելավման առումով չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը և այն, ըստ էության, կարող է ունենալ ինչպես խթանող, այնպես էլ արգելակող ազդեցություն գործարար միջավայրի զարգացման և տնտեսավարող սուբյեկտների ու պետության միջև գործընկերային հարաբերությունների հաստատման վրա²:

2015 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքը 2014 թվականի համեմատ աճել են 3.8 մլրդ դրամով կամ 0.4%-ով: 2015թ. հարկեր/ՀՆԱ ցուցանիշի 21.2 տոկոս մակարդակն ապահովվել է հիմնականում ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և շահութահարկի հաշվին: Նախորդ տարվա համեմատ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.8 տոկոսային կետով: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշն ըստ առանձին հարկատեսակների ներկայացված է զճապատկեր 3-ում:


¹ Հաշվարկները կատարված են ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_211.pdf), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», էջ 102-105:

² Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթրել պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին, 23.02.2012թ. N195-Ն որոշում:



Գծապատկեր 2. Հարկային եկամուտների և պետական տուրքի կատարողականն ըստ 2013-2015թթ. (մլրդ. դրամ)¹

2015 թվականին 2014 թվականի համեմատ ԱԱՀ/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.33 տոկոսային կետով, եկամտային հարկ/ՀՆԱ և մաքսատուրք/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 0.37 և 0.26 տոկոսային կետերով, մյուս հարկատեսակներ/ՀՆԱ ցուցանիշները մնացել են գրեթե անփոփոխ:




Գծապատկեր 3. 2015թ. հարկեր/ՀՆԱ (21.2 տոկոս) ցուցանիշն ըստ հարկատեսակների²

2013-2015 թվականներին հարկային եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ԱԱՀ-ը, եկամտային հարկը, շահութահարկը (գծապատկեր 3): 2015 թվականին 2014 թվականի համեմատությամբ ԱԱՀ-ի, շրջանառության հարկի, ակցիզային հարկի, շահութահարկի տեսակարար կշիռները հարկային եկամուտների կազմում նվազել են համապատասխանաբար 2.03, 0.38, 0.2 և 0.1 տոկոսային կետերով, իսկ մաքսատուրքի ու եկամտային հարկի տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 1.22 և 0.68 տոկոսային կետերով (գծապատկեր 4):

Հարկային եկամուտներում շարունակում են գգալի տեսակարար կշիռ ունենալ անուղղակի հարկերը (գծապատկեր 5): Հարկ է նշել, որ 2014 թվականին 2013 թվականի համեմատ հարկային եկամուտների կառուցվածքում աճել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ 1.2 տոկոսային կետով, իսկ 2015 թվականին 2014 թվականի համեմատ նվազել է 2.2 տոկոսային կետով:

¹ Հաշվարկները կատարված են ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_211.pdf), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», էջ 102-105:


² Նույն տեղում, էջ 102-105:



Գծապատկեր 4. 2015թ. հարկային եկամուտների կառուցվածքը¹

Հարկային եկամուտներում ոչ քիչ մաս են կազմում նաև մաքսատուրքերը: Այսպես, 2015 թվականին մաքսատուրքի մուտքերը կազմել են 61.5 մլրդ դրամ, իսկ 2014 թվականի համեմատ մաքսատուրքի մուտքերն աճել են 13.1 մլրդ դրամով կամ 27%-ով:

Մաքսատուրքի աճը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ ԵԱՀԿ-ին անդամակցելու արդյունքում ԵԱՀԿ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների հաշվեգրմամբ: Մաքսատուրքի աճը պայմանավորված է իրավաբանական անձանցից գանձված մուտքագրումների աճով: Մասնավորապես՝ 2015 թվականին 2014 թվականի համեմատ իրավաբանական անձանցից գանձվող մաքսատուրքն աճել է 48.9 տոկոսով, իսկ 2014 թվականին 2013 թվականի համեմատ՝ 6 տոկոսով:




Գծապատկեր 5. Անուղղակի և ուղղակի հարկերի² տեսակարար կշիռը հարկային եկամուտներում՝ ըստ 2013-2015թթ.

Միաժամանակ, այդ նույն տարիների առումով 2015 թվականին 2014 թվականի համեմատ ֆիզիկական անձանցից գանձվող մաքսատուրքը նվազել է 56.4 տոկոսով, իսկ 2014 թվականին 2013 թվականի համեմատ աճել 23.4 տոկոսով: 2015 թվականին մաքսատուրքի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է 6.0 տոկոս (գծապատկեր 6):

¹ Հաշվարկները կատարված են ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_211.pdf), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», էջ 102-105:

² Ուղղակի հարկերում ներառված են շահութահարկը, եկամտային հարկը, իսկ անուղղակի հարկերում՝ ԱԱՀ, ակցիզային հարկը:



Գծապատկեր 6. Մաքսատուրքի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, մաքսատուրքի հավելածի տեմպը 2013–2015թթ.¹

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրում մակրոտնտեսական կայունության ապահովման գործում կարևոր դեր ունի հարկային և մաքսային քաղաքականությունը, որը հանդիսանում է սոցիալական խնդիրների ու պետական գործառնությունների իրականացման հիմնական միջոց: Այս հանգամանքը պահանջում է հարկային և մաքսային քաղաքականության շարունակական կատարելագործում՝ հետապնդելով բյուջետային մուտքերի ավելացման, մրցակցային միջավայրի բարելավման, ներդրումային գրավչության ապահովման, տնտեսության իրական հատվածի զարգացման և ստվերային տնտեսության կրճատման նպատակներ: Պետության սոցիալ-տնտեսական, հարկային ոլորտի քաղաքականության արդյունավետության կարևորագույն պայման է նաև ազատ շուկայական տնտեսության համակարգի հաստատումը, որում գործում են հարկման միասնական սկզբունքներ ու արդարացի մեխանիզմներ, որոնցով պայմանավորված օրենսդրական մակարդակով հստակ կարգավորված են հարկային քաղաքականության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները՝ միջազգային առաջավոր փորձի պահանջներին համապատասխան: Այս հարցում առանձնակի կարևորություն ունի գործարարների շահերի պաշտպանության լիարժեք ապահովումը և ըստ այդմ էլ անհրաժեշտ է հավաստել հարկային քաղաքականության ոլորտում հավասար մոտեցումների ներդրումը, գործարարության խթանման արդարացի պայմանների ապահովումը՝ նպատակ ունենալով երաշխավորել երկրի տնտեսության բոլոր ճյուղերի երկարաժամկետ և հավասարակշռված զարգացումը: Նշված հարցերում հաջողություն արձանագրելու համար կարևորագույն նշանակություն ունի ճիշտ ու միասնական սկզբունքների վրա հիմնված հարկային և մաքսային քաղաքականության վարումը: Այս առումով, իհարկե, ընդունելի չէր Հայաստանի Հանրապետությունում առկա վիճակը, երբ հարկային իրավահարաբերություններ կարգավորող նորմերը զետեղված են տարաբնույթ իրավական ակտերում և դրանով պայմանավորված՝ հարկ վճարողների իրավունքների պաշտպանության գծով չունեին անհրաժեշտ համակարգվածություն: Բացի այդ, հարկային գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում կատարված փոփոխությունները հաճախ կրել են իրավիճակային բնույթ՝ կտրված լինելով հարկային միասնական համակարգի զարգացման տրամաբանությունից: Հարկային հարաբերությունների կարգավորման ոլորտում իրականացվող քաղաքականության միասնականության առկա խարխուլ վիճակն իր հերթին վտանգում է հարկ վճարողների իրավունքների, գործարարների շահերի պաշտպանության մեխանիզմները և դրանք իրականից անիրականի վերածումը:

Այս առումով, Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսգիրք ունենալու գաղափարի կյանքի կոչումը կարևոր հնարավորություն է լուծելու վերը նշված խնդիրները՝ ապահովելով հարկային արդյունավետ և հարկ վճարողների իրավունքների պաշտպանության տեսան-

¹ Հաշվարկները կատարված են ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_211.pdf), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», էջ 102-105:

կյունից արդարացի քաղաքականության միասնական օրենսդրական հիմքեր: Ընդ որում, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ միջազգային պրակտիկայում նույնպես կիրառվում է հարկային իրավահարաբերությունները միասնական իրավական ակտով կարգավորելու մոտեցումը (օրինակ՝ Վրաստան¹, Մոլդովա², Ռուսաստանի Դաշնություն³, Ուկրաինա⁴, Ֆրանսիա և այլն)⁵: ՀՀ հարկային օրենսգիրքը, ըստ էության, միավորում է հարկային հարաբերություններ կարգավորող բոլոր իրավական նորմերը: Այն, մասնավորապես, կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և հարկային օրենքներով նախատեսված վճարների հետ կապված փոխհարաբերությունները, սահմանում է ՀՀ հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, վճարողների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկման, վճարման, իսկ հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև նախատեսում է հարկային արտոնությունները: ՀՀ օրենսգրքում սահմանվում են հարկման բազաներն ու միասնականացվում են դրանց որոշման սկզբունքները, պարզեցվում է որոշ հարկերի հաշվարկումը, սահմանվում են հարկային վարչարարության առանձնահատկությունները և այլն:

Կարևոր հատված է նաև այն, որ ՀՀ օրենսգրքում նպատակ է հետապնդվում ավելացնել պետության հարկային եկամուտները, հատկապես խոշոր ձեռնարկատիրության լիարժեք հարկման ճանապարհով, ինչն ամբողջական իրացման պարագայում կարող է սոցիալական, առողջապահական, բնապահպանական, քաղաքաշինական և այլ հանրօգուտ ոլորտներում առավել ընդգրկուն ու արդյունավետ ծրագրեր իրականացնելու հնարավորություն ընձեռել: Կարևորված է նաև ապահովել բյուջետային եկամուտների կայունության ապահովման նպատակի իրացումը թե՛ միջնաժամկետ, և թե՛ երկարաժամկետ հեռանկարում:

Վերը շարադրվածով հանդերձ, հարկ ենք համարում ՀՀ Օրենսգրքի մշակման և քննարկման գործընթացի ուսումնասիրության հիման վրա արձանագրել, որ այդ Օրենսգիրքն, այնուամենայնիվ, չունի հանրային քննարկումների բավարար խորություն և, այդ առումով, չունի նաև հանրային ու մասնագիտական դրական ընկալման ու իրավաչափության անհրաժեշտ մակարդակ⁶:

Ավելին, հաշվի առնելով ՀՀ Օրենսգրքի կարգավորումների մեծածավալությունը՝ գտնում ենք, որ այն ընդունելուց հետո ևս պետք է շարունակվեն վերջինիս շուրջ իրականացվող քննարկումները՝ դրա դրույթների կիրառության միատեսակությունն ապահովելու, ինչպես նաև գործնականում օրենքի կիրառության ընթացքում ծագած խնդիրները լուծելու նպատակով:

Վերոնշյալները թույլ են տալիս կատարելու որոշակի եզրակացություններ և առաջարկություններ, որոնք ներկայացվում են ստորև.

1. ՀՀ հարկային օրենսգրքի առումով (այն ընդունվել է 2016թ. հոկտեմբերի 4-ին և ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից,

- առաջարկվում է ստեղծել մասնագիտական հանձնաժողով՝ դրանում ներառելով ոչ թե միայն ՀՀ օրենսդրությունը կիրառող պրակտիկ աշխատող մասնագետներին (ովքեր օրենսդրությունը գրում են, այսպես ասած, իրենց տեսակետով), այլև հանրապետության պրոֆեսորադասախոսական անձնակազմին, գիտնականներին, ներգրավելով նաև դրսի մասնագետներին և, որ ամենակարևորն է՝ լուծել հանձնաժողովի անդամների նորմալ վարձատրության հարցը: Զարմանալ կարելի է, թե անկախացման տարիներին ՀՀ հարկային օրենքներում որքան լրացումներ ու փոփոխություններ են կատարվել (ավելի քան 3

¹ http://www.rs.ge/Default.aspx?sec_id=4846&lang=2&newsid=2693

² <http://old.fisc.md/en/lege/fiscrm/>

³ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/

⁴ https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=41&cad=rja&uact=8&ved=0ahUKEwiQudWiutnNAhWGDiwKHTFPCMs4KBAWCBgwAA&url=http%3A%2F%2Fwww.visnuk.com.ua%2Fpdf%2Ftax_code.pdf&usq=AFQjCNG1zysHHU_SZkXPRQ8ydaOIoLdQNg&bvm=bv.126130881,d.bGs

⁵ <https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006069577&dateTexte=20160704>

⁶ <http://www.1in.am/1940933.html>, <https://armenpress.am/arm/news/850773/bhk-in-chi-gohacnum-harkayin-orensgrqi-nakhagitsy.html>

տասնյակ): Եթե դրանք բոլորը նոր գաղափարներ են եղել ու արդարացված, ապա ինչու դրանց հեղինակներին չգնահատել և հասարակությանը չներկայացնել ըստ արժանվույն: Եվ ընդհանրապես հարկային օրենքի ցանկացած փոփոխության ու լրացման դեպքում անհրաժեշտ է դրանց կցել նաև դրանց արդյունքում ստացվելիք տնտեսական էֆեկտը, իսկ հակառակ դեպքում (ինչպես եղել է քառորդ դար) տիրում է անպատասխանատվության մթնոլորտը դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Կարծում ենք, վերջակետ պետք է դնել նախկին արատավոր պրակտիկային:

- ՀՀ Օրենսգրքի ընդունումն արդարացված կլիներ, եթե դրան կցվեր նաև դրա կիրարկման արդյունքում ստացվելիք տարեկան տնտեսական էֆեկտը: Այլապես տպավորություն է ստացվում, թե դրա քննարկումն ու ընդունումը ինքնանպատակ է, և գլոբալ խնդիրներ դրանով չեն էլ լուծվում: ՀՀ հարկային օրենսդրության կատարելագործման առումով առաջարկվում է՝

1.1. Հարկային արտոնությունների կրճատում ու հարկման բազայի ամրապնդում (հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդում).

Առաջիկա տարիներին հարկային քաղաքականության տեսանկյունից անհրաժեշտ է առանձնակի կարևորել գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը, հարկման բազայի ընդլայնումը և ամրապնդումը, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Վերջինս նախատեսում է համանման տնտեսական պայմաններում գործող հարկ վճարողների նկատմամբ հարկման միևնույն կանոնների և կարգավորումների կիրառություն: Այս սկզբունքի նպատակը, ըստ էության, հարկման ոլորտում խտրականությունը նվազագույնի հասցնելը և պետական բյուջեի հարկային եկամուտների ցանկալի մակարդակի ապահովումն է:

Հարկային արտոնությունների կրճատումը, սակայն, դուրսին գործ չէ, քանի որ գործող արտոնությունների վերացումը կնշանակի կտրուկ փոփոխել այդ արտոնություններից օգտվողների ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության պայմանները և ազգային տնտեսության ներդրումային միջավայրն ընդհանրապես: Այս առումով, հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը պետք է իրականացվի բավարար զգուշավորությամբ՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից ու տնտեսության վրա բացասական հետևանքներից:

1.2. Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդում.

Այս սկզբունքի իրագործմամբ պետությանը հնարավորություն կընձեռվի հավաքագրելու լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ՝ իր սոցիալական ծրագրերը հասարակության մեջ հարաբերականորեն բարձր եկամուտներ ստացող անձանց հաշվին իրագործելու և սոցիալական նշանակության այլ խնդիրներ լուծելու համար:

Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդման հիմնական ուղղությունը պետք է լինի տեսանելի հարստության կամ շքեղության՝ առավել մեծ չափերով հարկումը:

1.3. Գործարար միջավայրի բարելավում.

ՀՀ հարկային օրենսդրության վերանայումները պետք է ուղղված լինեն հանրապետությունում գործարար միջավայրի հետագա բարելավմանը՝ որպես վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների տրամաբանական շարունակություն: Քաղաքականության այս ուղղության հիմնական նպատակադրումը պետք է լինի առնվազն տարածաշրջանում մեր հարկային համակարգի մրցունակության ու գրավչության ապահովումը: Այս առումով, շատ կարևոր է, որպեսզի հարկային օրենսդրության առաջիկա փոփոխությունները միտված լինեն հարկ վճարողների համար անհարկի և տնտեսագիտական հիմնավորումներ չունեցող սահմանափակումների վերացմանը:

1.4. Հարկման դրույքաչափերի օպտիմալացում.

Հարկման դրույքաչափերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի՝

- ա. դրանց գործողությունը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ ունենա առավելագույն չեզոքություն, և որպեսզի հարկային բեռը ընդունելի լինի ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության համատեքստում,

բ. դրանք հնարավորինս ներդաշնակ լինեն ԱՊՀ և այն երկրներում կիրառվող դրույքաչափերի հետ, որոնք, ըստ համապատասխան ոլորտների, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության մրցակիցներ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տնտեսության համար գերակա համարվող ոլորտների մասով հարկային քաղաքականության, այդ թվում՝ դրույքաչափերի համեմատականները պետք է կատարվեն այդ ոլորտների մասով աշխարհի առաջատար երկրների հետ: Բոլոր տիպի համադրություններում պետք է հաշվի առնվեն հարկման արդյունավետ դրույքաչափերը՝ հաշվարկված բոլոր տեսակի հարկային նվազեցումների և հարկման փաստացի կանոնների հիման վրա,

գ. այն ապրանքները, որոնց նկատմամբ պահանջարկի գնային ճկունությունը հարաբերականորեն ցածր է, և որոնք չեն հանդիսանում առաջնային սպառման ապրանքներ (հիմնականում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ՝ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտի արտադրանք), հարկվեն հարաբերականորեն ավելի բարձր դրույքաչափերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային գործոնով պայմանավորված՝ նշյալ ապրանքների գների հնարավոր բարձրացումը չի առաջացնի շուկայական իրադրության կտրուկ փոփոխություններ:

1.5. Հարկային վարչարարության պարզեցում և ընթացակարգերի կատարելագործում.

Այս սկզբունքի իրագործման հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

ա. օրենսդրական դրույթների պարզեցումը, երկխոսությունների ու անորոշությունների վերացումը.

բ. հարկ վճարողների վարչարարական բեռը չավելացնող հարկման մեթոդների շարունակական կիրառումը (մեթոդներ, որոնք չեն ընդլայնում հարկային մարմինների հետ շփումները, չեն մեծացնում հարկային հաշվառման վրա ծախսվող ռեսուրսները և հարկային մարմնից պահանջում են նվազագույն ռեսուրսների ծախս):

1.6. Երկարաժամկետ հեռանկարում հարկային համակարգի առավելագույն կայունության ապահովում.

Անհրաժեշտ է հնարավորինս ձեռնպահ մնալ հարկային համակարգում հաճախակի փոփոխությունների կատարումից (հատկապես եթե այդ փոփոխությունների իրականացումից էական բարելավումներ չեն ակնկալվում և դրանք պայմանավորված չեն պետության շահերի պաշտպանության անհետաձգելիությամբ)՝ հաշվի առնելով այն, որ նման փոփոխությունները անհարմարություններ են ստեղծում ոչ միայն հարկ վճարողների, այլ նաև հարկային մարմինների համար:

1.7. Հարկային համակարգում փոփոխությունների ընթացքի մշտադիտարկումը և հրապարակայնությունը.

Հարկային համակարգում կատարվող բարեփոխումները (այդ թվում՝ օրենսդրական)՝ դրանց արդյունավետության գնահատման նպատակով, պետք է ուղեկցվեն՝

- կատարողական ցուցանիշների համակարգի մշակմամբ և ներդրմամբ,
- կատարողական ցուցանիշների միջոցով ձեռնարկված միջոցառումների արդյունավետության դիտարկմամբ,
- հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության դեմ բողոքարկման արտադատական համակարգի կատարելագործմամբ,
- առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հրապարակայնության ապահովմամբ:

1.8. Հարկային համաձայնագրերի շրջանակի ընդլայնում.

Գործարար միջավայրի ու տնտեսական ակտիվության վրա նկատելի դրական ազդեցություն ունեն նաև միջազգային հարկային հարաբերություններ կարգավորող համաձայնագրերի կնքումը և կիրառությունը:

2. ՀՀ մաքսային օրենսդրության վերանայման առումով առաջարկվում է՝

2.1. Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման գործընթացի պարզեցում.

Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման գործընթացի պարզեցման հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- ա. հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերի կրճատումը, ինչը հնարավորություն կընձեռի նկատելիորեն պարզեցնել հայտարարագրման գործընթացը,
- բ. նախնական հայտարարագրման համակարգի շարունակական պարզեցումը և կատարելագործումը, ինչը հնարավորություն կընձեռի կրճատել հայտարարագրման գործընթացի վրա ծախսվող ժամանակը,
- գ. էլեկտրոնային եղանակով հայտարարագրերի ներկայացման համակարգի պարզեցումը և կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչը կարող է կարևոր ներդրում լինել արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և մաքսային մարմինների շփումների կրճատման խնդրի լուծման գործում:

2.2. Մաքսային հսկողության ժամանակակից մեթոդների կիրառում.

Մաքսային հսկողության համատեքստում անհրաժեշտ է կարևորել կառավարման նորագույն տեխնոլոգիաների ներդրումը՝ որպես մաքսային մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ հայաստանյան մաքսային մարմինների ու այլ պետությունների մաքսային մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը բարձրացնող գործիքների համախումբ: Վերջինիս կիրառությունը մի կողմից կնպաստի մաքսային ընթացակարգերի վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, իսկ մյուս կողմից՝ մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

2.3. Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործում.

Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը կարևոր ներդրում կարող է լինել ինչպես գործարար միջավայրի բարելավման, այնպես էլ մաքսային մարմինների աշխատանքի արդյունավետության աստիճանի բարձրացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն, որ այդ համակարգի կատարելագործումը՝

- ա. կընձեռի բարելավիչ և ոչ ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին մաքսային պարզեցված ու արագացված ընթացակարգերից օգտվելու հնարավորություն,
- բ. մաքսային մարմինն հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ ձևով օգտագործելու վարչարարական կարողությունները՝ կենտրոնանալով առավել ռիսկային համարվող տնտեսավարող սուբյեկտների ու գործարքների հսկողության վրա:

2.4. Հետբացթողումային հսկողության համակարգի կատարելագործում.

Մաքսային համակարգի զարգացման համատեքստում կարևորվում է նաև հետբացթողումային հսկողության համակարգի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս կարող է նպաստել ներմուծման պահին մաքսային սահմանին իրականացվող հսկողությունը նվազագույնի հասցնելուն: Այս իմաստով, հատկանշական է այն, որ որոշ հսկողական գործառնություններ մաքսային սահմանից աստիճանաբար դուրս բերելը և դրանք հետբացթողումային հսկողության շրջանակներում տեղայնացնելը միանգամայն համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին և կարող է հաջողությամբ իրականացվել նաև մեր երկրում:

2.5. Մաքսային համակարգին վերաբերող փոփոխությունների հրապարակայնություն, թափանցիկություն և կանխատեսելիություն.

Մաքսային համակարգի փոփոխություններին վերաբերող նախաձեռնություններն ու օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հասարակությանը, քննարկվեն տարբեր շահագրգիռ կողմերի հետ և նոր միայն որոշումներ կայացվեն՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումները:

Այս սկզբունքի ապահովման մյուս ուղղությունը պետք է լինի մաքսային ընթացակարգերում և մաքսային գործում կանխատեսելի, անկողմնակալ ու հստակ գործելակերպի ձևավորումը:

Հարկ ենք համարում նշել, որ հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքները մշակվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, կարևորելով հատկապես նշյալ ծրագրի պետական եկամուտների քաղաքականությանն առնչվող մասով ամրագրված՝ հետևյալ երկու կարևորագույն նպատակադրումները.

1. առաջիկա տասնամյակի ընթացքում ռեսուրսային շրջանակի ընդլայնման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան հարկային եկամուտները, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2025 թվականի ավարտը պետք է կազմի շուրջ 27-28 տոկոս,
2. հարկային և մաքսային վարչարարության բարելավումը պետք է դիտարկվի որպես գործարար ու ներդրումային միջավայրի առաջիկա բարեփոխումների գերակայություն:

Միննույն ժամանակ, հատկանշական է այն, որ հարկային եկամուտների աստիճանական աճի միջոցով ռեսուրսային շրջանակի ընդլայնման և գործարար միջավայրի բարելավման ու մրցունակության ապահովման նպատակներն անխուսափելի հակադրություններ ունեն իրենց մեջ: Հետևաբար, եթե նույնիսկ հաշվի առնենք այն, որ վարչարարության բարեփոխումները կարող են իրականացվել առանց որևէ բացասական հետևանքի, ապա հարկման բազայի ընդլայնմանն ուղղված քաղաքականությունը չի կարող իր ոչ բարենպաստ ազդեցությունը չունենալ ներդրումների և տնտեսական գործունեության ընդլայնման վրա: Այս առումով, նպատակային պետք է համարվի հարկային եկամուտների՝ անհրաժեշտ մակարդակով աճը (ներառյալ հարկման բազայի ընդլայնման միջոցով), իսկ գործարար միջավայրի և հարկային համակարգի տարածաշրջանային մրցունակության հիմնախնդիրները պետք է դիտարկվեն որպես սահմանված նպատակին հասնելու սահմանափակումներ:

Այս առումով, հարկային ու մաքսային օրենսդրության փոփոխությունների հիմքում դրվող սկզբունքների և այդ փոփոխությունների ուղղությունների մշակման ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ՝

1. պետական եկամուտների քաղաքականության ու վարչարարության հիմքում դրվող սկզբունքները պետք է բխեն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության ուղղվածությունից և հիմնված լինեն ազգային տնտեսության առանձնահատկությունների վրա,
2. հարկային ու մաքսային ոլորտներում պետական քաղաքականության մշակման ու վարչարարության իրականացման համատեքստում պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման, ազգային տնտեսության համար գերակա համարվող ճյուղերի շարունակական զարգացման, ներդրումների խրախուսման, տնտեսության արտադրատեխնիկական հիմքի կատարելագործման ու նորացման, հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման նպատակադրումները,
3. Հայաստանի Հանրապետությունում պետք է ձևավորել այնպիսի հարկային ու մաքսային համակարգեր, որոնք իրենց գրավչությամբ, կայունությամբ ու արդիականությամբ մրցունակ կլինեն առնվազն տարածաշրջանային համանման համակարգերի համեմատությամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՐՈՔՈՆՈՄԻԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՂԱՐՁ ԿԱՊԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏՈՎԻՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր,*

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ՍՎԵՏԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻ ՀԱՐՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Մակրոտնտեսական ակտիվության վրա հարկային և մաքսային մարմինների գործունեության փոխադարձ կապի ազդեցության գնահատման խնդիրը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկը: Ընդ որում, այդ ուղղությամբ իրականացվող բոլոր միջոցառումները կապված են պետական բյուջեում հարկային և մաքսային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների ապահովման հետ: Մակրոտնտեսական գործունեության ցուցանիշները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե որքանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր տնտեսական միջավայրի վերաբերյալ պատկերացումներ:

Բանալի բառեր. *Հարկային համակարգ, մաքսային համակարգ, մակրոտնտեսական ցուցանիշներ, գործարար միջավայր, հարկային վարչարարություն, հարկային քաղաքականություն, մաքսային քաղաքականություն, հարկային եկամուտներ:*

ВЗАИМОСВЯЗЬ ДЕЯТЕЛЬНОСТИ НАЛОГОВЫХ И ТАМОЖЕННЫХ СЛУЖБ И МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ АКТИВНОСТИ

ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., профессор*

директор Института экономики им. М. Котаняна НАН РА, член-корр. НАН РА

СВЕТА АЛЕКСАНДРОВНА АРОСЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Проблема оценки влияния взаимосвязи деятельности налоговых и таможенных служб на макроэкономическую активность является одним из приоритетов экономической политики любой страны. Причем, все мероприятия, осуществляемые в этом направлении, связаны с обеспечением налоговых и таможенных поступлений в государственный бюджет, а также макроэкономических показателей. Показатели макроэкономической деятельности дают не только информацию о том, насколько вышеуказанные цели осуществимы, но и обеспечивают представление об общей экономической среде.

Ключевые слова: *налоговая система, таможенная система, макроэкономические показатели, деловая среда, налоговое администрирование, налоговая политика, таможенная политика, налоговые доходы.*

THE INTERRELATION BETWEEN THE ACTIVITIES OF TAX AND CUSTOMS AUTHORITIES AND MACROECONOMIC ACTIVITY

VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia

SVETA ALEKSANDR HAROSYAN, *Candidate of Sciences (Economics)*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The issue of estimation of the impact of tax and customs authorities upon the macroeconomic activity is among the top priorities of the economic policy of every country. Furthermore, all the measures implemented for that purpose are connected with ensuring collection of tax and customs revenues for the state budget and stability of macroeconomic indicators. The macroeconomic indicators inform not only about the possibility of reaching the mentioned goals but also about overall economic environment.

Keywords: *Tax system, customs system, macroeconomic indicators, business climate, tax administration, tax policy, customs policy, tax revenue*